25.913

ՖԻՆ-ՊԼԱՆԱՅԻՆ
ՍԵՐԻԱ №1

Զ. ԳՈԼԴՇՏԵՅՆ

# ԻՆՉՈ՞Ւ ՉԵ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




ՊԵՏՀՐԱՏ
1931

334.57+[332.2
Գ-74
15 JAN 2010

Զ. ԳՈԼԴՇՏԵՅՆ

# ԻՆՉՈ՞Ւ ՅԵ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1931

Гос. Пуб. библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна
15826-57

8 MAY 2013

25.913

Հրատ. № 1561

Գրաոհեպ. № 6269 (բ). Պատ. № 1506. Տիրաժ 4.000

Պետհրատի տպարան Երևանում.

## ԻՆՉՈ՞Ւ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐ

Սպառկոոպերացիան սպասարկում է ԽՍՀՄ-ի բնակչության սպառողական և կուլտուր-կենցաղային կարիքներին։ Քաղաքի և գյուղի բնակչությանը սպառողական ապրանքներ մատակարարելու համար պահանջվում են հսկայական դրամագլուխներ։ Սպառկոոպերացիայի ապրանքաշրջանառությունը արդեն տասը միլիարդ ռուբլուց անցել է։ Ապրանքների այդպիսի մասսա շարժման մեջ դնելու համար սպառկոոպերացիան պետք է ունենա յերեք միլիարդ ռուբլու շրջանառու և մշտական կապիտալ։ Պարզ է, որ գոյություն ունեցող փայավճարի նորմաներով սպառկոոպերացիան մինչև այժմ այդպիսի մեծ գումարներ չէր կարող հավաքել և իր ամբողջ մատակարարման աշխատանքն ստիպված է լինել վարել գլխավորապես պետության և արդյունաբերության հաշվին։ Պետական բանկին և պետական արդյունաբերությանը սպառկոոպերացիայի ունեցած պարտքը հասնում է բազմահարյուր միլիոն ռուբլիների։ Ոտար և փոխառու միջոցներով կատարվող աշխատանքն ավելացնում

է ծախսերը և թանգացնում է բնակչության սպասարկումը սպառկոոպերացիայի կողմից։ Վարկով ոգտվելը սահմանափակում է սպառողական կոոպերացիայի նախաձեռնությունն ու մանյովրային գործողությունը—վարկը տրվում է որոշ պայմաններով և ժամկետներով։

## ԻՆՉՈ՞Ւ ՅԵ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՑ ԻՐ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԸ ՅԵՏ ՎԵՐՑՆՈՒՄ

Բայց հիմնականն այդ չէ։ Հիմնականն այն է, որ պետությանն այժմ կապիտալները հարկավոր են յերկրի ինդուստրացման, մեր արդյունաբերության վերակառուցման և նոր տեխնիկայի հիման վրա նրան վերասարքավորելու համար։ Խորհրդային Միության անկախությունը կապիտալիստական յերկրներից քաղաքականապես և տնտեսապես լիակատար ապահովելու, բուրժուական պետությունների կողմից մեզ վրա տեղի ունենալիք և հնարավոր հարձակման դեպքում մեր մարտունակությունը ամրացնելու համար մենք պետք է ունենանք մեր սեփական ծանր ինդուստրիան, այսինքն սեփական մեքենաշինական արդյունաբերությունը, պետական տրակտորային արտադրությունը և այլն։ Դրա համար պահանջվում է զարգացած վառելիքային արդյունաբերություն, ածխային և հանքային բազաներ, նավթահանության ընդարձակում։ Արդյունաբերության այդպիսի ուժգին զարգացումը պահանջում է խոշոր կապիտալ ներդրումներ։ կՄյուս բոլոր յերկրներում ծանր ինդուստրիա առուցվել և զարգացել է ավելի հզոր և հարուստ պետություններից ստացվող փոխառությունների և վարկերի ոգնությամբ։ Մեզ համար օտարերկրյա փոխառությունների և վարկերի ճանապարհը, ավելի կամ պակաս ընդարձակ չափերով, գոյություն չունի։ Խորհրդային իշխանությունը կարող է և պետք է նկատի ունենա միմիայն իր սեփական ուժերը։ Ահա թե ինչու խորհրդային իշխանությունը պետք է մոբիլիզացիայի յենթարկի իր հզոր ուժերն ու միջոցները՝ արագացնելու սոցիալիստական շինարարությունը քաղաքում և գյուղում։ Խորհտնտեսությունների շինարարությունը և կոլտնտեսություններին ոգնելը, արտասահմանից հազարավոր տրակտորներ ստանալը, սեփական գործարանների—տրակտորային, ավտոմոբիլային—կառուցումը, կոմբայններ արտադրող գործարանների կառուցումը, չքավոր և միջակ տնտեսություններին ոգնելը՝ նրանց կոոպերացման և միացման ճանապարհին—այդ ամենը պահանջում է գգալի ֆինանսական ծախսեր, և խորհրդային իշխանու-

թյունն ստիպված է վոչ միայն կրճատել սպառկոոպերացիայի վարկերը, այլ յետ վերցնել կոոպերացիային իբրև վարկ բաց թողնված իր միջոցները։ Սպառկոոպերացիան կազմակերպական և տնտեսական տեսակետից բավականին ամրացել է։ Յերկար տարիներ նա օգտվել է պետության օժանդակությունից, վորը նա ստացել է թե ուղղակի բյուջետային հատկացումների (դոտացիայի) և թե կարճատև վարկերի ձևով։ Այժմ հերթն սպառկոոպերացիային է հասել՝ ազատելու պետական միջոցները առևտրական շրջանառությունից և հանձնելու նրանց բուռն կերպով զարգացող սոցիալիստական շինարարությանը։ Սպառկոոպերացիան ընթացիկ տարում պետք է պետությանը վերադարձնի մոտ 600 միլիոն ռուբլի։ Բնական է, վոր կոոպերացիայի կարիքը նոր կապիտալների կուտակման վերաբերյալ աճում է։ Ընթացիկ 1929—30 տարում սպառկոոպերացիայի սիստեմը պետք է շրջանառությունը ավելացնի 24 $^{0}/_{0}$-ով, վորը պահանջելու յե նաև շրջանառու կապիտալի համապատասխան մեծացում։

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, վոր աշխատավորների պահանջները մեծանում են։ Նոր—վերակառուցողական շրջանը ամբողջ լայնությամբ դնում է մի շարք նոր խնդիրներ։



Փայատերերի կուլտուրական և կենցաղային կարիքներին սպասարկելու և բավարարելու գծով սպառկոոպերացիային նոր և լրացուցիչ պահանջներ են արվում։ Ընթացիկ տարում սպառողական սիստեմը նոր խանութների և պահեստների կառուցման վրա ծախսելու յե 200 միլիոն ռուբլուց ավելի։ Հին խանութներն ու պահեստները, մանավանդ գյուղում, չեն համապատասխանում խորհրդային կոոպերացիայի խնդիրներին—պետք է կառուցել նորերը։ Առանձնապես սուր է նոր խանութի և պահեստի շինարարության կարիքը՝ Կիրգիզիայի, Բուրյաթիայի և այլ հետամնաց ազգային ռայոններում։ Պահանջվում է կառուցել և կազմակերպել մեծ թվով ճաշարաններ, թեյարաններ, հացի փռեր, խոհանոցներ, լվացքատներ, մանկական հիմնարկություններ, սառցարաններ և բանջարապահեստներ։ Ճաշարանների, խոհանոցների, հացի փռերի, բանջարապահեստների մեծ պահանջ ունեն վոչ միայն նորակառույց քաղաքները, քաղաքային բանվորական կենտրոնները, այլև գյուղերը, խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները։

Սպառկոոպերացիան պետք է կատարի կոմունիստական կուսակցության և խորհ. իշխանության դիրեկտիվը բանվորների ռեալ աշխատավարձը 3 տոկոսով ավելացնելու՝ սպառողական կոո-

պերացիայի գներն իջեցնելով և բանվորներին ավելի շատ գյուղատնտեսական ապրանքներ մատակարարելով։ Սպառողական կոոպերացիան պետք է օգտագործի պարենային բոլոր (այդ թվում նաև տեղական շուկաները) աղբյուրները և ըստեղծի լրացուցիչ աղբյուրներ՝ կազմակերպել կաթնատնտեսական ֆերմաներ, ստեղծել բանջարատնտեսություններ, ծախսելով դրա համար 600 միլիոն ռուբլի միմիայն 1929—30 թվին։

Վերոհիշյալ հարվածային աշխատանքները բավական պարզ կերպով խոսում են այն մասին, որ սպառողական կոոպերացիային հարկավոր են հսկայական կապիտալներ՝ կատարելու համար այն պատասխանատու խնդիրները, որ կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային կառավարությունը դրել են կոոպերացիայի առաջ։ Սպառողական կոոպերացիայի կողմից՝ իր պլանի չկատարումը կանդրադառնա ամբողջ ժողովրդական տնտեսության աշխատանքի տեմպերի վրա. առանց նավթապահեստների կառուցման, տրակտորները չեն կարող ապահովվել վառելանյութով, իսկ այդ հանգամանքը կազդեր դաշտային աշխատանքների ընթացքի վրա։ Բանջարեղենների և այլ սննդամթերքների պակաս լինելը, խանութների փոքր ցանցը և նրա սարքավորման թույլ լինելը տանում են



մեզ դեպի հերթերն ու պոչերը, դեպի բանվորական թանկագին ժամանակի վատնումը՝ ապրանքներ գնելիս, բանվորների սննդի վատացումը, իսկ այդ բանը վատ է անդրադառնում բանվորների աշխատանքի արտադրողականության և նրանց մշակած ապրանքների ինքնարժեքի վրա։ Հացի փռերի ու ճաշարանների դանդաղ կառուցումը,— այն նոր շինարարությունների շրջաններում (Դնեպրոշին, տրակտորշին, ավտոշին և այլն), որտեղ երբեմն աշխատանքը կատարվում է միանգամայն անբնական տեղերում,— կարող է գործը տանել դեպի աշխատանքի արտադրողականության անկումը և շինարարության ժամկետների ձգձգումը։

Սպառողական կոոպերացիայի աշխատանքի զարգացումը և նրա միջոցով շինարարական պլանների կատարումը չափազանց կարևոր է ամբողջ բանվոր դասակարգի, ամբողջ չքավոր-միջակային գյուղացիության և մեր երկրի ամբողջ սոցիալիստական շինարարության համար։ Այստեղից էլ պարզ է, որ այն հսկայական լրացուցիչ կապիտալները, որոնք պահանջվում են սպառողական կոոպերացիայի համար, պետք է ինչ էլ լինի, գտնվեն և հավաքվեն։ Այդ կապիտալները պետք է տա բանվորների, չքավորների և միջակների մասսան։ Այն ամենը, ինչ ակ-

տրվ ե սպառողական կոոպերացիայում և փայատերերի մասսայում, պետք ե մոբիլիզացիայի յենթարկվի այդ հերթական և հարվածային աշխատանքը կատարելու համար։

## ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Սպառկոոպերացիան վորտեղից կարող ե և պետք ե ստանա այդ լրացուցիչ միջոցները։

Մասնավոր առևտրում կապիտալների աճման հիմնական աղբյուրը հանդիսանում ե շահը։ Հայտնի յե, վոր շահը մասնավոր առևտրում հասնում ե հսկայական չափերի — տասնյակ տոկոսների։

Խորհրդային կոոպերացիան պայքարում ե գների իջեցման, խորհրդային վալյուտայի կայունացման համար. այդ պատճառով ել նա չի կարող ընթանալ բարձր շահերի գծով։ Չնայած իր աշխատանքի ռացիոնալացմանն ու եժանացմանը, չնայած շրջանառությունների աճմանը, ընթացիկ 1929—30 թ. շահն զգալիորեն ավելի փոքր ե լինելու, քան նախորդ տարում։ Սկզբում նախատեսվել ե ընթացիկ տարում ստանալ 155 միլիոն ռուբլու շահ (անցյալ տարվա 231 միլիոն ռուբլու փոխարեն), սակայն ներկայումս



(1930 թ. մարտ) պարզվել ե, վոր առևտրական, այսինքն սպառողական կոոպերացիայի ընթացիկ տարվա մթերման գործառնությունները վոչ մի շահ չեն բերելու։ Այսպիսով շահը չի կարող սպառողական կոոպերացիայի համար ծառայել իբրև միջոցների լրացման աղբյուր։

## ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԸ

Կոոպերատիվ կապիտալների կուտակման հիմնական աղբյուրը հանդիսանում ե փայավճարը։ Փայավճարները ծառայում են փայատերերի ակտիվության և շահագրգռվածության համար իբրև ցուցանիշ։ Սպառկոոպերացիայի փայակապիտալների գումարը տարեցտարի աճում ե ինչպես գյուղում, նույնպես և քաղաքում. գյուղական ցանցի փայակապիտալները մեծանում են հետևյալ կարգով. 1926 թ. նրանք կազմում եյին 22,7 միլիոն ռուբլի, 1927 թ.— 3[illegible],6 միլ. ռուբլի, 1928 թ.— 93,7 միլ. ռ., 1929 թ.— 208,8 միլ. ռ., և 1930 թ. համար պլանով նախատեսված ե հավաքել 165 միլ. ռ. և գյուղական ցանցի փայակապիտալը հասցնել մինչև 374 ռուբլու։ Քաղաքային և բանվորական ցանցի փայակապիտալներն աճել են հետևյալ ձևով. 1926 թ. — 26,5 միլ. ռուբլի, 1927 թ.— 40,8

միլ. ռ., 1928 թ. 87,2 միլիոն ռ., 1929 թ.— 166 միլ. ռ., 1930 թվին պլանով նախատեսվել ե 160 միլ. ռ., և քաղաքային բանվորական ցանցի փայակապիտալները հասցնել մինչև 326 միլիոն ռուբլու։ Ամբողջ կոոպերացիայում փայակապիտալների աճումը տեղի յե ունեցել հետևյալ ձևով. 1926 թ. 1/X-ին նրանք կազմում եյին 49,2 միլիոն ռուբլի, 1927 թ. 1/X-ին—86,4 միլ. ռուբլի, 1928 թ. 1/X-ին—180,9 միլիոն ռուբլի, 1929 թ. 1/X-ին—374,9 միլ. ռ., ըստ պլանի 1930 թ. 1/X-ին - 699,9 միլիոն ռուբլի։

Հենց այդ ժամանակ շատ կարճ ժամանակամիջոցում (փաստորեն 2—3 տարվա ընթացքում) հավաքված 700 միլիոն ռուբլի փայակապիտալները անպայման խոշոր նվաճում են խորհրդային կոոպերացիայի համար և ցույց են տալիս, թե զարգացման ինչպիսի փայլուն պայմաններ գոյություն ունեն Խորհրդային յերկրում սպառողական կոոպերացիայի համար։ Յեվ յեթե նկատի ունենանք, վոր փայակապիտալների այդ գումարը վերաբերում ե տասնյակ միլիոնավոր փայատերերի (1928 թ.—22 միլիոն, 1929 թ.—33 միլիոն, ըստ պլանի 1930 թ.— 22 միլիոն փայատեր), պարզ կլինի նրա չնչին լինելը։ Առանձնապես այդ յերևում ե մեկ փայատիրոջն ընկնող միջին փայից, վորը կազմում ե՝



| | 1926 թ. | 1927 թ. | 1928 թ. | 1929 թ. |
|---|---|---|---|---|
| Գյուղական ցանցով . . | 3—08 | 3—62 | 6—73 | 10—21 |
| Քաղաքային և բանվորակ. ցանցով . . | 4—89 | 6—09 | 9—72 | 12—56 |

Սպառկոոպերացիայի 1929—30 թվին կատարած վաճառքը՝ մեկ փայատիրոջը միջին հաշվով կկազմի 175 ռուբլի։ Սպառկոոպերացիայում կոոպերացիայի ունեցած շրջանառության միջին արագությունը կազմում ե 90 օր, այսինքն տարվա ընթացքում շրջանառու կապիտալը պտույտ ե գործում 4 անգամ։ Մեկ փայատիրոջ պարենավորումը ֆինանսավորելու համար այսպիսով պահանջվում ե 43 ռ. 50 կոպ. կամ փաստական փայից 3—4 անգամ ավելի։ Փայատերը ֆինանսավորում ե նրան պարենավորելու աշխատանքը մեկ հինգերորդ մասով։ Այդ ցույց ե տալիս, թե վորքան փոքր և անբավարար են սպառկոոպերացիայի փայակապիտալները, թե վորքան նրանք չեն ապահովում նույնիսկ միմիայն ապրանքաշրջանառությունը, չխոսելով արդեն կապիտալ շինարարության, կոոպերատիվ գյուղական տնտեսությունների զարգացման անհրաժեշտ միջոցների մասին։

Սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմը պետք է շատ ուժ և յեռանդ վատնի փայավճարների հոսանքն ուժեղացնելու վրա։ Փայատերն ինքը պետք է ֆինանսավորի իր շրջանառությունը, և վոչ թե հույսը պետության վարկերի վրա դնի։ Սակայն այդ խնդրի կատարումը պահանջում է վորոշ ժամանակ։ 1929/30 թ. ընթացքում փայակապիտալների հավաքման վերոհիշյալ թվերը հանդիսանում են պլանային թվեր և այդ պլանների կատարումը՝ նշանակում է փայահնարավորությունների լիակատար օգտագործում՝ ներկայումս դիֆերենցիալ փայի գոյություն ունեցող դրույքներով։ Պետք է նկատի ունենալ, վոր տվյալ մոմենտում գոյություն ունեցող դիֆերենցիալ փայի դրույքները չափազանց ցածր են։ Բատրակի և բարձր խմբերի դիֆերենցիալ փայը տատանվում է 5 ռուբլուց մինչև 40 ռուբլին։ Միջին հաշվով բոլոր կատեգորիաների դիֆփայը կկազմի 18—20 ռուբլի։ Կոմունաների և կոլտնտեսությունների անդամների համար ներկայումս գոյություն ունեն չափազանց ցածր դրույքներ՝ 5—10 ռուբլի։ Սպառկոոպերացիայի միջոցների բոլոր պահանջները ծածկելու համար միմիայն փայավճարները բավական չեն։ Մոտիկ ապագայում դիֆփայի դրույքները վերաքննության են առնվելու նրանց չափերը մեծաց-



նելու նպատակով՝ քաղաքի համար միջին հաշվով 2 ռ. 50 կ., բարձր վարձատրվող խմբերի համար 10 ռուբլի մաքսիմալ ավելացում կատարելով. գյուղի համար՝ միջին հաշվով 2 ռուբլի, այն պայմանով, վոր այդ բանը քաղաքում ձեռնարկվի 1929/30 թ. 2-րդ կիսամյակի ընթացքում, իսկ գյուղում՝ ընթացիկ տարվա վերջին յերեք ամիսների ընթացքում։ Սակայն և այդպիսի դրույքներով միջոցները հերիք չեն անի։

## ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետք է գտնել և օգտագործել այլ տեսակի աղբյուրներ և բնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու ուղիներ։ Այդպիսի լրացուցիչ աղբյուրներ են հանդիսանում փայատերերի ավանդները։ Սպառողական կոոպերացիայի կարիքին վարկի մեջ պետք է բավարարի վոչ միայն փայատերը, այլ և ամեն մի սպառող, վորն օգտվում է սպառկոոպերացիայի ծառայություններից։ Այդ ձեռնտու յե վոչ միայն ամբողջ ժողովրդական տնտեսության և սոցիալիստական շինարարության համար, այլ և իր՝ ավանդատուի համար։

Սպառողական կոոպերացիայի ավանդների գործառնություններն ունեն բազմամյա փորձ նաև

կապիտալիստական յերկրներում, չնայած վոր այնտեղ ավանդներ ընդունելու կոոպերացիայի իրավունքը չափազանց սահմանափակված ե։ Անգլիական կոոպերացիան ունի մոտ մեկ միլիարդ ռուբլի, բաղկացած փայատերերի փայերից, ավանդներից և փոխառություններից։ Գերմանական բանվորական կոոպերացիան ունի 38 միլիոն խնայողական ավանդներ, շվեյցարականը—20 միլիոն և այլն։

Ցարական Ռուսաստանում կոոպերացիան ավանդներ ընդունելու իրավունք չուներ, դրա համար պետք եր կառավարությունից հատուկ թույլտվություն ստանալ։ Ցարական իշխանության ժամանակ կոոպերացիայի բոլոր արգելքները վերացված են, որենքը վոչ մի խոչընդոտ չի հարուցում փայատերերի ավանդների ընդունելության համար։ Ընդհակառակն սպառկոոպերացիայի ավանդատուներն ոգտվում են նույն արտոնություններով, ինչ վոր պետական խնայողական դրամարկղների ավանդատուները։ Սպառողական ընկերությունների ավանդները դրոշմանիշի վճարից ազատ են։ Սպառկոոպերացիան ավանդների աշխատանքի համար հող ունի։ Անհրաժեշտ ե այդ աշխատանքների համար մոբիլիզացիայի յենթարկել կոոպերատիվ մասսաների ուշադրությունը։ Ավանդների գործառնությունները

1469



պետք ե լայնորեն զարգացվեն և կոոպերացիայի աշխատանքի համար լրացուցիչ միջոցների լուրջ աղբյուր հանդիսանան։

Պետությունը շահագրգռված ե, վոր կոոպերացիայի միջոցով ավանդների գործառնությունները զարգանան, քանի վոր կոոպերացիան ունի ավելի զարգացած և ճյուղավորված ցանց, քան խնայողական դրամարկղները, քանի վոր կոոպերատիվ ցանցն ավելի յե մոտեցված բնակչությանը (առանձնապես այդ վերաբերում ե գյուղին) և քանի վոր ավանդատուի համար ավելի հարմար ե իր խնայած դրամները կոոպերացիայի մեջ դնել, վորտեղից նա ապրանքներ ե ստանում։

Ավանդների գործառնությունների մասին՝ կոոպերատիվ կազմակերպությունների բացատրական աշխատանքին պետք ե մեծ ուշադրություն դարձնել։

## 1929/30 ՏԱՐՎԱ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՎ ԱՀՍ-ԻՑ ԹՎԵՐԻ ՎԻԺՈՒՄԸ

Ավանդների գործառնությունները սպառկոոպերացիայում չափազանց թույլ կերպով են զարգացած. չխոսելով արդեն այն մասին, վոր «ավանդներ» հատվածի մեջ մտնում են պատահական մարդկանց կամ հիմնարկությունների ամե-

Գոս. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան
15826 — 52

նույն տեսակի պատահական փոխառություններ, վորոնք, ինարկե, բառիս բուն իմաստով չեն հանդիսանում իբրև ավանդներ։ Ավանդների գործառնություններ ասելով պետք է հասկանալ՝ իր կոոպերատիվում բնակչության դրված միջոցների պահպանումը։ Սակայն յեթե նույնիսկ վերցնենք այն բոլոր միջոցները, վորոնք ներկայումս մտնում են «ավանդներ» հատվածի մեջ, այդ դեպքում դեռ նրանց գումարը չափազանց չնչին է, և ավանդների գործառնությունների զարգացումը վոչ մի կերպ չի համապատասխանում վոչ սպառողական կոոպերացիայի հնարավորություններին և վոչ էլ նրա պահանջներին։

1929 թ. հոկտեմբերի 1-ին գյուղական ցանցի բնակչությունից գանձված միջոցները կազմում եյին ընդամենը 50.900 հազար ռուբլի։ Կենտրմիության վերահսկիչ թվերի համաձայն 1929/30 թվին լրացուցիչ ավանդներով պետք է հավաքվեր 48,8 միլիոն ռուբլի։ 1929/30 թ. առաջին յեռամսյակում նույն այդ վերահսկիչ թվերով պետք է հավաքվեր տարեկան գումարի 40%-ը կամ մոտ 20 միլիոն ռուբլի։ Իսկ փաստորեն հավաքված է միմիայն 8 միլիոն ռուբլի։

Պետք է նկատի ունենալ, վոր հենց Կենտրմիության վերահսկիչ թվերը հանդիսանում են խիստ «չափավոր» թվեր—միջին հաշվով յուրա-



քանչյուր փայատիրոջը 1 ռ. 25 կոպ.։ Իսկ յուրաքանչյուր փայատիրոջից հավաքված է մոտավորապես 30 կոպ.։

Կենտրմիության տարեկան առաջադրանքը կատարված է ընդամենը 12,5%-ով (փոխանակ 40%-ի)։ Միմիայն առաջին յեռամսյակում չհավաքվածը կազմում է 12 միլիոն ռուբլի։ Այդ փաստը ցույց է տալիս, թե սպառողական կոոպերացիան աշխատանքի այդ բնագավառին վորքան քիչ ուշադրություն և յեռանդ է գործադրել։ Մի շարք կոոպերատիվ կազմակերպություններում նկատվում է նույնիսկ ավանդների ռեղատվությունը։ 1930 թ. հունվարի ընթացքում ավանդները պակասել են՝ Սիբիրում 558 հազար ռուբլի, Կենտրոնական-սևահող մարզում 894 հազ. ռուբ., Միջին-Վոլգայի մարզում 453 հազ. ռ., Նիժեգորոդսկի յերկրում 1.605 հազ. ռուբլի։ Ավանդներն ուղղակիորեն պակասել են նույնպես Հյուսիս-Արևմտյան մարզում, Բուրյաթ-Մոնղոլյան հանրապետության մեջ, Ղազախստանում և Դաղստանում։

Վոր կարելի յէ ավանդների գործառնությունները զարգացնել և վոր Կենտրմիության վերահսկիչ թվերը կատարելապես իրական թվեր են, ցույց է տալիս մի շարք կազմակերպություններում այդ վերահսկիչ թվերի կատարման ըն-

թացքը։ Այնտեղ, վորտեղ ավանդների գանձմանը հարկավոր ուշադրություն է դարձված, այնտեղ կենտրոմիության ավանդների առաջադրանքը կատարված է և տեղ-տեղ էլ նույնիսկ գերակատարված է։ Կենտրոնական-սևահող մարզի առանձին շրջաններում ավանդների տարեկան առաջադրանքը 1-ին յեռամսյակում կատարվել է 94 տոկոսով, լավ է կատարվել նաև Բաշկիրիայի, Կիրգիզիայի և այլ տեղերի առանձին շրջաններում։

Իսկ ընդհանուր առմամբ ամբողջ գյուղական ցանցում 1930 թ. հունվար ամիսը տվել է արդեն վոչ թե աճում, այլ ավանդների նվազում 3 ռուբլով։

## ՎԵ ԱՀՍԿԻՉ ԹՎԵՐԻ ՎԻԺՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ավանդների գործառնությունների այդպիսի դրության գլխավոր և հիմնական պատճառը՝ դեպի այդ աշխատանքն ունեցած մեր անուշադրությունն է և հասարակական-մասսայական աշխատանքի թուլությունը։ Փայատերերի մեջ բավարար ագիտացիոն-բացատրական աշխատանք չի ծավալվել, բատրակները, չքավորները, յերիտասարդները, կանայք և կոոպակտիվը ավանդների գանձման գործի մեջ չեն քաշվել։ Հարվա-



ծային բրիգադներ դուրս չեն բերվել, գործի չեն քաշվել բատրակ-չքավորական այնպիսի խմբեր, վորոնք գոյություն ունեն սպառողական ընկերություններում, այդ հարցի վրա տեղական կուսակցական, կոմյերիտական և արհեստակցական կազմակերպությունները լուրջ ուշադրություն չեն դարձրել, սոցիալիստական մրցում չի կազմակերպվել, իսկ այնտեղ, վորտեղ կազմակերպվել է, կաբինետա-վերնախավային բնույթ է կրել. մրցել են վարչությունները կամ նույնիսկ միմիայն նախագահները, իսկ փայատերերը, ակտիվիստները, հավաքարարները, կոոպկազմակերպիչները մրցման մեջ չեն քաշվել և վերջապես ավանդների կամպանիայի գործի մեջ չի քաշվել մամուլը, մոբիլիզացիայի չեն յենթարկվել գյուղթղթակիցները և պատի թերթերը։ Այդ և միմիայն այդ է ավանդների գործի վիժման պատճառը, վորովհետև առանց հասարակայնության ու հասարակական-մասսայական աշխատանքի, առանց ակտիվի ոգնության, առանց չքավորության և բատրակության վրա հենվելու ներկայումս վոչ մի աշխատանք և գործողություն կատարել չի կարելի։ Փայատերերից փայավճարներ գանձելիս սպառողական կոոպերացիայի տեղական մարմինները դիմում են գլխավորապես դեֆեցիտային ապրանքներ բաց թողնելու գծով

ճնշում գործ դնելուն։ Փայատերերի մասսայի վրա ներգործելու այդ միջոցը տարեցտարի կորցնում է իր ուժը։ Դեֆիցիտային ապրանքների մեծ մասը այժմ արվում է նորմավորման կարգով, նորմաները սահմանում են իշխանության մարմինները։ Իհարկե մենք առայժմ չենք կարող հրաժարվել փայատիրոջ և ընդհանրապես բնակչության վրա տնտեսապես ներգործելուց։ Նյութական շահագրգռվածության, փայակուտակման տնտեսական խթանման բոլոր մեթոդները պետք է կիրառել նաև հետագայում։ Հերթից դուրս բավականաչափ և նորմավորված ապրանքներ բաց թողնելը, կապիտալի տոկոսները ժամանակին վճարելը և այլն պետք է գործադրել նաև առաջիկայում—իհարկե վոչ մի կերպ չվնասելով չքավորների, բատրակների, ցածր վարձատրություն ստացող բանվորների և ծառայողների շահերին։

Փայատիրոջը կուլտուր-կենցաղային գծով սպասարկելու գործում առանձնապես լայն կերպով պետք է կիրառվի նյութական շահագրգռվածության մեթոդը. ավանդատուներին կինոյի համար ձրի կամ եժանագին տոմսեր տալ, ավանդատուներին առաջին հերթին գրագետ դարձնել, ավանդատուների յերեխաներին առաջին հերթին



դպրոց ընդունել, կոոպերատիվ մանկական այգիներ, մսուրներ և այլն։

Սակայն այդ բոլոր խթանները հարկ յեղած արդյունքը չեն տա առանց դրանց հասարակական-մասսայական աշխատանքի հետ զուգորդելու, առանց կոոպերատիվ ակտիվին գործի մեջ քաշելու։

Վերոհիշյալն առավելապես վերաբերում է ավանդների գործառնություններին։ Յուրաքանչյուր փայատեր պարտավոր է փայավճար տալ. այդ բանը նա անում է օրենքի զորությամբ և կոոպերացիայի կանոնադրությամբ։ Իսկ փայատիրոջը վոչ մի օրենք և կանոնադրություն չի ստիպում կոոպերացիայում իր խնայողություններն ու դրամական ավելցուկները պահ տալու։ Այստեղ գլխավորապես պետք է գործել փայատիրոջը համոզելու, փայատիրոջ և կոոպերատիվի համար ավանդների գործի փոխադարձ օգտավետությունը բացատրելու միջոցով։ Պետք է փայատիրոջ մեջ առաջ բերել վստահություն։ Պետք է գործով ապացուցել ավանդների լիապես գաղտնի լինելը։ Վերջերս շատ հաշվետարներ և այլ աշխատողներ բազմիցս խախտել են ավանդների գաղտնի լինելը։ Այդ նշանակում է կատարել ավանդների օրենքի ուղղակի խախտում։ Ավանդների գաղտնիքը չպահպանող կոոպերատիվա-

տողները պետք է չենթարկվեն պատասխանատվության։ Պետք է բացարձակ կերպով ապահովված լինի ավանդների լիակատար գաղտնի լինելը։ Ավանդների գումարներից մի վորոշ մասը պետք է մշտապես պահվի կոոպերատիվի գանձարկղում, վորպեսզի յերբ ավանդատուն ցանկանա յետ պահանջել իր ավանդը կամ նրա մի մասը, կարելի լինի այդ պահանջն անմիջապես բավարարել։ Պետք է խիստ ուշադիր վերաբերմունք ունենալ դեպի ավանդատուները, պետք է ավանդներն ընդունելու և բաց թողնելու տեխնիկան լինի ավանդատուի համար չափազանց հարմար։ Չպետք է աչքաթող անել նույնպես այն ազատ միջոցները, վորոնք կան կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և այլ տնտեսական կազմակերպություններում։ Ավանդների հարցը չի վերանում նույնպես համատարած կոլեկտիվացման շրջաններում։ Ժամանակավոր կամ տնտեսական բնույթ ունեցող ազատ դրամական մնացորդներ կլինեն թե կոլտնտեսականների մոտ և թե բանվորական խորհտնտեսություններում։ Պետք է աշխատանք կատարել այդ միջոցները կոոպերացիայի շրջանառության մեջ քաշելու համար։ Կոլտնտեսություններում կոլտնտեսականների աշխատավարձի սիստեմը կիրառելիս պետք է կոլտնտեսությունների ղեկավարու-



թյան հետ պայմանավորվել անդամներին աշխատավարձը տալ կոոպերատիվի միջոցով։

Ավանդների աշխատանքի սկզբնական փորձը ունեցել է գլխավորապես զուտ առևտրական, նեղ գործարարական բնույթ։ Հիմնվում եյին կուլակի և բնակչության ապահովված մասի վրա» (Կենտրմիության Հյուսիս-արևմտյան միության գրած նամակից)։ Ջքավորների և միջակների մանր ավանդների վրա ուշադրություն չեյին դարձնում։ Մինչդեռ հենց չքավորների և միջակների մանր ավանդներն իրենց մասսայով պետք է տան ավելի խոշոր հանրագումարներ, և հենց այդ խմբերին էլ մենք պետք է սպասարկենք։

## ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏՈԿՈՍՆԵՐԸ

Սպառկոոպերացիայի պրակտիկայում յեղել են բարձր, վաշխառուական տոկոսներ վճարելու այնպիսի դեպքեր, վոր վորոշ ընկերություններում նրանք հասել են 12, 20 և $24^{0}/_{0}$-ի։ Այդ, իհարկե, անթույլատրելի յե։ Ավանդների համար վճարվող տոկոսների չափը միջակ-բանկայինից, այսինքն $12^{0}/_{0}$-ից չպետք է անցնի։ Բարձր տոկոսներից օգտվում է խոշոր ավանդատուն և վնասվում է փայատերերի այն մնացած ամբողջ մասսան, վորը կոոպերատիվի աշխատանքի թանկացումից միմիայն

կորցնում ե։ Չե՞ վոր մենք շահագրգռված ենք չքավոր-միջակային լայն մասսաների և վոչ թե ունևոր գյուղացիների կամ բարձր վարձատրություն ստացող ծառայողներ վերնախավի օգուտներով։

Տոկոսային դրույքները (միջակ-բանկային) նորմաների սահմաններում) պետք ե փոփոխվեն այնպես, վորպեսզի կարելի լինի խթանել յերկարատև ժամկետներով մացվող ավանդները։ Վորքան մեծ ե այն ժամկետը, վորով մացվում ե ավանդը, այնքան նա ավելի օգտակար և ձեռնտու յե կոոպերատիվի համար, այդ պատճառով ել կարելի յե նրան ավելի վճարել։

Յեթե սպառողական ընկերության շրջանում գոյություն ունեն նաև այլ կազմակերպություններ, վորոնք վարում են ավանդների գործառնություններ (վարկային կամ արհեստագործական կոոպերացիա), տոկոսային դրույքների չափերը պետք ե համաձայնեցվեն նրանց հետ, վորպեսզի հիվանդագին փոխադարձ մրցություն թույլ չտրվի։

## ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մի շարք կոոպերատիվներ վերջերս կատարում են ավանդների գործարքներ, վորոնք ունեն ընթացիկ հաշվի կամ խնայողական գրքույկի



բնույթ. փայատերերը վորոշ գումար մացնելով կոոպերատիվը, ստանում են յելքի-մուտքի տալոններ (կամ օրդերներ) ունեցող ավանդների հատվածական գրքույկ։ Միևնույն տալոնն իր մի կողմով հանդիսանում ե իբրև «մուտքի», իսկ մյուսով իբրև «յելքի» տալոն։ Ավանդ մուծելիս լրացվում ե մուտքի կողմի տալոնը։ Ապրանք գնելիս ավանդատերը վոչ թե փող ե վճարում, այլ տալոններ, վորոնք ավանդատիրոջ կողմից լրացվում են յելքի կողմում։ Ավանդների գրքույկը բերել ե տրվում ավանդատիրոջ կամ «ներկայացնողի անունով». վերջին դեպքում այդ գրքույկով օգտվել կարող են ընտանիքի բոլոր անդամները։ Գրքով տալիս են ամեն տեսակի ապրանք, վորոնց թվում նաև նորմավորված ապրանքներ, առանց հերթի։ Բանվորական ռայոններում բնակչությունը դեպի ավանդների գործառնությունների այդպիսի ձևն ունի միանգամայն դրական վերաբերմունք։ Բացի ապրանքներից ավանդատերն այդ տալոններով կարող ե ստանալ նաև կանխիկ դրամ։

Կարիք չկա առանձնապես կանգ առնել ավանդների սովորական և «հին» ձևերի վրա — «ժամկետային» ավանդներ, յերբ վորոշ գումար մացվում ե վորոշ ժամկետով և «անժամկետ», յերբ ավանդատերը կարող ե ուզած ժամանակը

չեն պահանջել իր մտցրած գումարը։ Ավանդների այդ ձևերը լավ հայտնի չեն և՛ բնակչությանը, և՛ կոոպերատիվի աշխատողներին։ Կարիք չկա ապացուցելու, որ սպառողական կոոպերացիայի համար ավելի ձեռնտու չէ գործ ունենալ ժամկետային ավանդների հետ։ Որոշ ժամկետով մուծված ավանդը կոոպերատիվը կարող է ազատ կերպով տնօրինել, օգտագործելով միջոցները պլանային կարգով և մաքսիմալ օգուտով, վորչափով սպառողական ընկերությունը հաստատ գիտի, թե վորքան ժամանակ ինքը կունենա այդ միջոցները և յերբ նրանք շրջանառությունից դուրս կբերվեն և կվերադարձվեն տիրոջը։ Ընկերությունը կարող է պատրաստվել՝ վերադարձնելու յենթակա ավանդների գումարը փոխարինել այլ դրամական աղբյուրներով կամ իր տնտեսությունը համապատասխան կերպով վերակառուցելու այնպես, որ հետագայում կարելի լինի ամբողջովին, առանց այդ միջոցների, գործը առաջ տանել։ Ընդհակառակն վոչ ժամկետային ավանդը (կամ «ցպահանջ» տրված ավանդը), վոր կարող է մուծվել մաս առ մաս և յետ վերցվել նույնպես միանգամից կամ մաս առ մաս, արդեն հնարավորություն չի տալիս փողի այդպիսի ազատ ու հաստատուն մանյովրներ կատարելու։ Ուստի գերադասելի չէ գործ



ունենալ ժամկետային ավանդների հետ և վորքան կարելի չէ մեծ ժամկետների հետ։ Սակայն չպետք է արհամարհել նաև վոչ ժամկետային ավանդները, քանի վոր նրանով մասսայական գործառնություններ կատարելով միջոցների մի վորոշ մաս մշտապես լինում է կոոպերացիայի շրջանառության մեջ։ Անակնկալի չգալու և իրեն ամեն տեսակի հանկարծակիությունից ապահովելու համար կոոպերատիվը վոչ ժամկետային ավանդներին պետք է 5—10 %-ի հատուկ դրամական մի ռեզերվ ունենա, վորպեսզի պահանջի դեպքում կարելի լինի ավանդը վերադարձնել։ Ավանդների գումարը վորքան մեծ լինի, վորքան ավելի ամրանան ավանդների գործառնությունները, այնքան ավելի քիչ դրամական ռեզերվ պետք է ունենալ մշտապես դըրամարկղում՝ պահանջի դեպքում վոչ ժամկետային ավանդները վերադարձնելու համար։ Այդ ռեզերվը, իհարկե, չպետք է սնդուկում քնի, այլ գտնվի մոտակա բանկի ընթացիկ հաշվի մեջ, միության մեջ կամ պետական խնայդրամարկղում։ Վոչ ժամկետային ավանդների տեղատվության ուժեղացման սեզոններում ռեզերվային ֆոնդը պետք է ուժեղացվի, խաղաղ շրջանում նա պետք է փոքրանա։ Ավանդների աշխատանքի վորոշ փորձը յուրաքանչյուր կոոպերատիվի կը-

թելադրի, թե վորչափ ռեզերվի ֆոնդ պետք է ունենալ տարվա զանազան շրջաններում։ Այսպես թե այնպես նաև վոչ ժամկետային ավանդների դեպքում նրանց մի վորոշ մասը մշտապես գտնըվում է կոոպերատիվի տրամադրության տակ, վոր կարող է այն ազատ կերպով տնօրինել։ Ավանդների այդ ձևին ել ավելի կայունություն կտա այն հանգամանքը, յերբ ավանդատերը պարտավորվի կոոպերատիվին նախազգուշացնել (իր ավանդը յետ ստանալու ցանկության մասին) մի քանի օր—5—10 օր առաջ։ Յեթե ավանդատերը այդպես վարվի փոքրիշատե շոշափելի գումարներ յետ ստանալու (մանր գումարների համար առանձնապես այդպիսի նախազգուշացման կարիք չկա, մանր գումար կոոպերատիվում միշտ էլ կլինի, համենայն դեպս այդպիսին հավաքելը կոոպերատիվին դժվար չէ), այդպիսի դեպքում գործառնությունների այդ տեսակը կատարելապես կայուն և օգտակար կլինի։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ավանդների գումարները պետք է օգտագործվեն միմիայն շրջանառության համար և չպետք է դըրվեն անշարժ հարստությունների, գույքի, շինարարության մեջ և այլն։ Վարկերը բոլոր հանգամանքներում հանդիսանում են իբրև կարճ ժամկետային վարկ, վոր սահմանափակ ժամկետ-



ներում պետք է վերադարձվեն և նրանց յուրաքանչյուր անգամ անշարժ կամ կեսանշարժ վիճակի մեջ դնելը կոոպերատիվի համար մեծ ռիսկ է։

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի ավանդներն ընդունելու և վճարելու տեխնիկայի վրա։ Մինչև այժմ ավանդներն ընդունելու պայմանները մեզ մոտ առխաձևի յեն։ Նույնիսկ հերթական փայավճարը մուծելու համար փայատերը ստիպված է շատ ժամանակ կորցնել, յերկար ժամանակ հերթի կանգնել և այլն։ Իսկ ավանդը մուծելը կամ յետ ստանալը մաս առ մաս կամ լրիվ կերպով ներկայումս ժամանակի այնպիսի կորստի, այնպիսի ձգձգումների հետ է կապված, վոր շատերը գերադասում են փողը գրպաններում կամ սեղանի արկղում պահել, կորցնելով նրա տոկոսները։ Պետք է ամեն միջոց ձեռք առնել ավանդների աշխատանքը պարզ դարձնելու, ավանդատիրոջ համար չափազանց դյուրացնելու այդ գործառնությունը։ Ավանդների հետ կապված բոլոր գրանցումներն ու մատյանները պետք է լինեն օրինակելի։ Պետք է վերացվի ամեն մի ձևականություն և ավանդները մուծելու կամ ստանալու գործում ամեն մի քաշքշուկ։ Ավանդների ընդունումն ու վճարումը պետք է տեղի ունենա բոլոր հերթե-

քից դուրս և հերթից դուրս պետք է տրվեն ամեն տեսակի տեղեկանքները և այլն։

## ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՍՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հատուկ տեղ են գրավում նպատակային ավանսները։ Բնակչության միջոցների մոբիլիզացիայի այդ յեղանակը վաղուց չէ, ինչ սպառողական կոոպերացիան գործադրում է, սակայն կա բավականին փորձ, թե դրական և թե բացասական, վոր կարելի յէ մի գումարի բերել և անել վորոշ յեզրակացություններ։

Ապրանքների համար նպատակային ավանսների սիստեմ մտցնելիս կենտրմիության վարչությունը առաջարկեց իր համապատասխան բաժանմունքներին և վարչություններին մի վորոշ ժամանակամիջոցում վորոշել այն ապրանքների վորակն ու քանակը, վորոնք պետք է պահվեն ավանսային գործառնությունների համար։

Սպառողական սիստեմի տեղական կազմակերպություններն սկսեցին ապրանքների համար ավանսներ հավաքել։ Ավանսներ հավաքեցին կարի մեքենաների, հեծանիվների, ինքնայեռների, պրիմուսների, արթուկների համար և այլն, բայց վորում նրանք հավատացնում եյին բնակչությանը, վոր այն քաղաքացիները, վորոնք ավանսներ են տվել, հաստատապես վորոշված ժամկետին կստանան այն ապրանքները, վորոնց համար ավանսներ են տրված։ Սակայն այդ կազմակերպություններն իրենք վոչ մի ապրանքային ֆոնդ չեյին հատկացնում և չեյին պահում, հույս ունենալով, թե հարկավոր ապրանքները համապատասխան քանակությամբ կուղարկի կենտրմիությունը, իսկ կենտրմիությունը վոչ մի ապրանք չեր հատկացնում, հույս ունենալով, թե այդ բանը կանեն տորգաս կազմակերպություններն իհաշիվ իրենց ապրանքային ռեսուրսների։ Հետևանքն այն եր լինում, վոր այդ կազմակերպություններում ապրանքների համար նպատակային ավանսների ամբողջ սիստեմը խորապես իր վարկը քցում եր, կատարված ամբողջ աշխատանքն իզուր կորչում և ավանսներ հավաքելու պլանը վիժում եր։

Բոլորովին այլ է աշխատանքի այդ ձևը այն կազմակերպություններում, վորոնք իրենց սեփական ռեսուրսներից համապատասխան ապրանքային մասսաներ են տրամադրել և առհասարակ ավելի ուշադիր և մտածված յեղանակով են անցել այդ աշխատանքին։ Այստեղ մենք տեսնում ենք, վոր ավանսային գործառնությունները միանգամայն բավարար զարգացած վիճակ ունեն։

Ընդհանուր առմամբ ապրանքային շուկայի դրությունը ամբողջովին նպաստում է բնակչության միջոցների մոբիլիզացիայի այդ ձևի զարգացմանը։ Այնպիսի ապրանքներ, ինչպիսին են որ նաև հեծանիվները, պետք է վաճառվեն ավանսներով, վորոնք պետք է մուծվեն մոտավորապես կես տարի առաջ։ Ուրիշ ապրանքների համար ավանսներ կարող են ընդունվել իրենց կես արժեքի չափով և փոքր ժամկետներով (մեկ կամ յերկու ամիս առաջ)։ Ապրանքների այն կոնտինգենտները, վորոնց համար ավանսներ են հավաքվելու, պետք է վորոշվեն տեղերում՝ հաշվի առնելով տեղական պահանջն ու տեղական պայմանները։ Մի տեղ կարելի յե ինքնայեռներ դուրս բերել, մյուսների համար ավանսներ չեն ընդունում և ավելի լավ է դուրս բերել յերաժըշտական գործիքներ։ Ընդհանրապես կարելի յե նպատակային ավանսներով տալ հետևյալ ապրանքները՝ հեծանիվներ, կարի մեքենաներ, ինքնայեռներ, մահճակալներ, վառարան, բուրդ, պատրաստի հագուստ, մասամբ բամբակե կտորեղեն (մարկիզետ, սավաններ, սպիտակեղեն), տրիկոտաժ, յերաժշտական գործիքներ, մի քանի դեֆիցիտային շինարարական նյութեր, արթուկներ, պրիմուսներ, ժամացույցներ, վերմակներ և այլն։ Այս ապրանքներից ել հենց տեղերը



պետք է ջոկեն (կարելի յե, իհարկե, այդ ապրանքների ցուցակը տեղերում լրացնել) տվյալ շրջանի համար ամենից համապատասխանները։ Վորոշ ապրանքներ պետք է ամբողջովին ջոկվեն ավանսային գործարքների համար, մյուսները կարող են ջոկվել մաս առ մաս։ Վորոշ ապրանքների վերաբերյալ՝ պետք է սահմանել ավանսներ դրանց ամբողջ արժեքի համար, մյուսների վերաբերյալ միմիայն արժեքի մի մասի համար։ Այդ բոլոր պայմանները պետք է մշակվեն տեղում կոոպերատիվի հետ միասին, նրա հետ պետք է վորոշել նաև ջոկվող ապրանքների կոնտինգենտն ու քանակը։ Պետք է շահագրգռել և այդ աշխատանքին ակտիվ կերպով մասնակից դարձնել բոլոր կոոպերատիվիստներին, հավաքարարներին, հավաքագրողներին, կոոպկազմակերպիչներին։ Նպատակային ավանսների ամբողջ աշխատանքը պետք է կատարել փայատերերի սիստեմատիկ մասսայական վերահսկողության տակ և այդպիսով կատարելապես ապահով լինել վաճառողների կողմից տեղի ունեցող ամեն տեսակի չարաշահումներից։ Դրա հետ միասին հատուկ ուշադրություն պետք է դարձնել չքավորների և բատրակների շահերին, վորոնց պետք է հնարավորություն տրվի մի շարք արտոնությունների միջոցով մասնակցելու ավանսային գնումնե-

րին կամ նրանց համար հարկավոր է ջոկել պահվող ապրանքների մի մասը սովորական կարգով բաց թողնելու համար։

Կենտրմիությունը պետք է սահմանի աշխատանքի սկզբունքները և տեխնիկական կանոնները։ Սակայն տեղական կազմակերպությունները առանց կենտրոնի կողմից հարցի լուծմանը սպասելու պետք է ինքնուրույն կերպով սեփական ապրանքային ֆոնդեր ստեղծեն և անմիջապես աշխատանքի անցնեն։

Մի շարք բանվորական կոոպերատիվ կազմակերպություններում հաջող կերպով զարգանում է նպատակային ավանդներ հավաքելը ապագա կոոպերատիվ կաթնատնտեսական ֆերմաների և բանջարանոցների արտադրանքի համար։ Մոտավորապես 50 ռուբլու չափով ավանդ մտցրած փայատիրոջը սահմանված նորմաներից դուրս բաց կթողնվի (երբ կաթնատնտեսական ֆերման սկսի գործել) կաթի կամ յուղի հավելյալ բաժին և 50 ռուբլու ավանդը կմարի պարենավորման ապրանքների այդ հավելյալ քանակություններով։ Իսկ ներկայի ստացվող ավանդները օգտագործվում են նոր կոոպերատիվ գյուղական տնտեսությունների կազմակերպման և գոյություն ունեցողների ընդարձակման համար։

Նպատակային ավանդների բոլոր գործառ-



նություններում պետք է միջոցներ ձեռք առնել առանձին մարդկանց կողմից դեֆիցիտային ապրանքներն ավելի վաճառելու և այլ չարաշահումների առաջն առնելու համար։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե որևէ պատճառով հնարավոր չէ պատվիրված ապրանքով արդարացնել ավանդը, ավանդային գումարները պետք է անմիջապես վերադարձվեն իրենց տերերին։

## ԱՎԱՆԴՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ավանդների գործառնությունների հաջողությունը մեծ մասամբ կախված է նրանից, թե որչափով այդ գործառնությունները լրիվ և յեռանդուն կերպով կկիրառվեն աշխատանքի և ներգործման հասարակական մեթոդներով, որչափ ուշադիր վերաբերմունք կունենան դեպի այդ գործառնությունները կոոպերատիվ կազմակերպությունների ղեկավար մարմիններն ու ապարատը։

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպություն ավանդների կամ ավանսների գործառնությունների կատարմանն անցնելիս պետք է մշակի մանրամասն պլան և ճիշտ վերահսկի

թվեր, հասցված մինչև կոոպերատիվի յուրաքանչյուր բաժանմունքը կամ խանութը։ Ավանդների աշխատանքի մեջ պետք է քաշվեն ծառայողների կոլեկտիվները, վորոնց հետ պետք է մշակվեն ավանդների գործի զարգացման պլանի բոլոր մանրամասնությունները։ Անհրաժեշտ է ապահովել ապարատի բարոյական շահագրգռվածությունը ավանդների աշխատանքի հաջողությամբ։

Դրանից հետո հարցը պետք է մշակվի կոոպակտիվի հետ։ Պետք է մշակվեն աշխատանքին մասնակցելու կոոպակտիվի մեթոդներն ու յեղանակները և բոլոր ակտիվիստների—կոոպկազմակերպիչների, կոոպբյուրոյի, խանութային հանձնաժողովների, հավաքարարների և այլն—աշխատանքին ակտիվ մասնակցելու խրախուսանքի և խթանման միջոցները։ Առանձնապես պետք է ապահովված լինի հացամթերման վերջին կամպանիայի ժամանակ աչքի ընկած կոոպաշխատավորների մասնակցությունն այդ աշխատանքում։

Ավանդների և ավանսների գանձման ամբողջ կամպանիան պետք է քննարկվի բատրակչքավորական խմբերում. քննության հետևանքով պետք է մշակվեն աշխատանքին և նրա վերահսկողությանը բատրակության և չքավորության



ունեցած մասնակցության կարգը, ինչպես և բնակչության այդ խմբերի շահերի ապահովման միջոցները։

Քննարկմանն ու ավանդների աշխատանքին պետք է ակտիվ մասնակից դարձնել կոմյերիտական և անկուսակցական յերիտասարդությունը, աշխատավորուհիների, չքավորների և բատրակուհիների կազմակերպությունները, փայատերերին և տեղական հասարակական կազմակերպությունները։ Հատուկ աջակցություն պետք է ցույց տան տեղական կուսակցական կազմակերպությունները՝ ագիտացիոն պրոպագանդիստական ուժերով և բոլոր կուսակցականների ու կոմյերիտականների, բոլոր բանվորների և բանվորուհիների ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելով։

Ավանդների գործառնությունները ժողովրդականացնելու և տվյալ կոոպերատիվ կազմակերպման մեջ նրանց զարգացման կոնկրետ պլանի համար պետք է ոգտագործվեն գյուղխորհուրդների տեղի ունեցող բոլոր պլենումները, ֆաբգործուսների նիստերը և կին պատգամավորների ժողովները։ Պետք է կատարել ագիտացիոն բացատրական լայն կամպանիա, վորն ընդգրկի բոլոր փայատերերին և փայատիրուհիներին։

Պլանով նախատեսված ավանդների և ավանսների գանձված ամբողջ գումարը պետք է բաշխվի կոոպերատիվիստների, հավաքարարների և կոոպկազմակերպիչների միջև, վորպեսզի յուրաքանչյուր ակտիվիստ մշակի մի վորոշ շրջան և պատասխանատու լինի միջոցների այն մասի համար, վորը չենթակա յե մոբիլիզացիայի՝ ավանդների և ավանսների միջոցով։

Բացի նյութական-կենցաղային բնույթ ունեցող խրախուսանքի միջոցներից, պետք է ակտիվիստների միջև կազմակերպել շատ փայատերեր ընդգրկելու և մեծ միջոցներ գանձելու մրցություն։ Աչքի ընկնողներին պետք է տալ գրքեր, ուղարկել դասընթացները, տալ ռադիո-ընդունիչ և այլն։ Նպատակահարմար է ակտիվիստների խմբերի միջև կազմակերպել սոցմրցում՝ աչքի ընկնող խմբերին տալով համապատասխան նվեր։

Սոցմրցման մեջ պետք է քաշվեն նաև կազմակերպության ապարատի աշխատավորները, մանավանդ վաճառորդներն ու խանութների վարիչները։ Սոցմրցումը պետք է ընդգրկի բոլոր խանութները, բաժանմունքները և առանձին փայատերերին ու ավանդատուներին։ Մրցման արդյունքները հաճախ պետք է պարբերաբար (ամենից լավ է յուրաքանչյուր շաբաթ) և մանրա-



մասն կերպով լուսաբանվեն տեղական պատի թերթերում, առանձին թռուցիկներում և հայտարարություններում, վորոնք կախվում են բոլոր հասարակական վայրերում։ Ավանդների գանձման ընթացքի մասին նույնպես պետք է տեղեկություն տրվի հասարակական կազմակերպություններին և փայատերերի ժողովներին։

Ղեկավարման, փոխադարձ ինֆորմացիայի մրցման համար պետք է պարբերաբար հրավիրվեն ակտիվիստների խորհրդակցություններ, վորտեղ թե՛ տվյալ կոոպերատիվ կազմակերպության ղեկավարները և թե՛ իրենք ակտիվիստները տեղեկություն են տալիս ավանդների աշխատանքի և բնակչության միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարման մասին։

Ավանդների և ավանսային կամպանիաներին մասնակցելու համար պետք է լավագույն ակտիվիստներից և հենց ավանդատուներից կազմակերպել հարվածային բրիգադներ, ըստվորում բրիգադները պետք է շպրտվեն ավելի դժվար վայրերն ու շրջանները։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն ֆաբրիկաների, գործարանների և հիմնարկությունների վրա, վորոնցում պետք է օգտագործվի տեղական կոոպերատիվ հասարակայնությունը—կոոպբյուրոն, կոոպլիազորները, կոոպ-

ավանդները և տեղական արհկազմակերպությունները՝ տեղկոմը, տնտեսական հանձնաժողովները և այլն։

Համատարած կոլեկտիվացման շրջաններում պետք է օգտագործվի կոլտնտեսային հասարակայնությունը — ակտիվը, հարվածային բրիգադները, արտադրական խորհրդակցությունները։ Խանութներն ու կոոպերատիվի այլ ձեռնարկությունները պետք է զարդարվեն համապատասխան լոզունգներով և պլակատներով։

Լավ արդյունքներ են տալիս շատ կազմակերպությունների կողմից գործադրվող բոլոր տները շրջելը, փայատերերի անհատական հարց ու փորձը։

Առանձնապես լայն կերպով պետք է ներս քաշվեն պատի թերթի թղթակիցների խմբակները և խմբկոմները, որոնց համար պետք է կազմակերպվեն հատուկ ինֆորմացիոն հաղորդումներ և զեկուցումներ։ Ապարատի բոլոր աշխատավորները և կոոպակտիվիստները պետք է պատի լրագրում լուսաբանեն իրենց աշխատանքը, իրենց փորձը և իրենց աշխատանքի արդյունքները։

Պետք է լավ հիմքերի վրա դրված լինի սոցմրցման պայմանագրերի կատարման ստուգումը. ստուգումը պետք է կատարվի հրապարակով և մասսայական բնույթ ունենա։



Ագիտացիոն-բացատրական աշխատանքի ժամանակ պետք է պարզել հետևյալ մոմենտները.

1. Պետության և սոցիալիստական շինարարության պլանի կատարման համար ու փայատերերի սպասարկման վերաբերյալ սպառկոոպերացիայի աշխատանքի բարելավման համար ավանդների ունեցած նշանակությունը։

2. Ավանդատերերի առավելությունները ու օգուտները, հակադրելով այդ ավանդներին պետության համար անօգուտ կերպով պահվող մեռյալ կապիտալի փողերը։

3. Ավանդների և ավանդային գործի տեխնիկան, ավանդների գումարների ապահովվածությունը և ցանկացած ժամանակին նրանց ետ ստանալու հնարավորությունը։

## ԿԻՆՈ ՅԵՎ ՌԱԴԻՈ

Բնակչության միջոցները մոբիլիզացիայի ենթարկելու համար պետք է օգտագործվեն կինոն և ռադիոն։ Կինո-սեանսները, համապատասխան ֆիլմեր ընտրելիս, սեանսը համապատասխան դասախոսության կամ զեկուցման հետ կապելը, այդ ամենը մեծապես կօգնեն ավանդների և ավանսների մոբիլիզացիայի գործին։

Այդ նույնը վերաբերում է նաև ռադիոյին։

Պետք է օգտագործվեն խրճիթ-ընթերցարանների զրույցներն ու դասախոսությունները, լեկցիաները, գրադարակները, գրադարանները, խմբակները, հեռակա դասընթացները, ագիտդատերը, էքսկուրսիաները, հարցերի ու պատասխանների ցերեկոները և այլն։

## ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ ՅԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԿԵՆՑԱՂԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Մենք մեր ամբողջ ագիտացիոն աշխատանքի ընթացքում պետք է պայքար մղենք վոչ միայն խնայած դրամները սպառկոոպերացիայում պահ տալու, այլև խնայողություն անելու մասին։ Մենք դրան զուգընթաց պետք է պրոպագանդ մղենք կենցաղի ասպարեզում խնայողության ռեժիմ մտցնելու մասին, ցույց տանք այդ խնայողության աղբյուրները (ալկոհոլից, թղթախաղից, ծխելուց հրաժարվելը), լրացուցիչ միջոցների աղբյուրները (թափթփուկների օգտագործումը) և այլն։ Այդ աշխատանքը, ինչպես և ավանդների ու ավանսների աշխատանքը պետք է հատուկ ինտենսիվությամբ կատարել գեղջկուհիների և աշխատավորուհիների մեջ, կենցաղի ասպարեզում տնտեսություն անելու, խնայումները նպատակահարմար կերպով օգտագործելու և պահպանելու գործն ավելի մոտիկ և ավելի ծանոթ է կնոջը, քան տղամարդուն։ Այդ պատճառով էլ ավանդների և ավանսների աշխատանքի մեջ պետք է քաշել կանանց ակտիվին, հատուկ տեսակի նվիրատվություն սահմանել մրցման և ավանդների մոբիլիզացիայի գործում աչքի ընկնող ակտիվիստ կանանց համար. նոր մսուրներ, մանկական հրապարակներ և այգիներ բանալը, կոնսուլտացիաներ, ծննդկանների նպաստի ֆոնդի կազմակերպում և այլն։



## ԿԱԶՄԲԱԺԻՆՆԵՐԻ ՈՒ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ

Ծայրամասերը ղեկավարելու միակ մարմինը հանդիսանում են կազմբաժինները և հրահանգիչները։ Այս պարզ ճշմարտությունը մեզ մոտ հաճախ մոռանում են վոչ միայն ոպերատիվ, այլև կազմբաժինների աշխատողները։ Մինչդեռ միանգամայն պարզ է, վոր կազմակերպական և ագիտացիոն բոլոր միջոցները ճիշտ կերպով կարելի յե կիրառել և նրանք հարկ յեղած արդյունքը կտան այն դեպքում միայն, յեթե կազմակերպական բաժանմունքներն ավանդների և ավանսների մոբիլիզացիայի կամպանիան ղեկավարելու խնդիրը դարձնեն իրենց աշխատանքի հիմնաքարը։ Կազմբաժինների աշխատանքի բոլոր պլանները տվյալ ժամանակամիջոցում իրենց համար իբրև կենտրոնական խնդիր պետք է ունենան միջոցների մոբիլիզացիան ընդհանրապես, և ավանդների-ավանսների մոբիլիզացիան մասնավորապես։ Հրահանգչական բոլոր շրջագայությունները, կենտրոնի և տեղերի բոլոր խորհրդակցությունները, բոլոր հետազոտությունները ու քննությունները, բոլոր կամպանիաները ու ձեռնարկումները, վոր կիրառում են հրահանգիչները, պետք է համակված լինեն տվյալ ժամանակում կոոպերացիայի համար այդ հիմնական խնդրով։ Հրահանգիչներն այդ աշխատանքում պետք է սորվեն աշխատավորներին

ցույց տան կենդանի և իրական օգնություն, գործով ցույց տան, թե ինչպես պետք է և հարկավոր է կատարել միջոցների մոբիլիզացիայի հասարակական աշխատանքը և ինչպես պետք է կազմակերպել ավանդային գործառնությունները։ Բնակչության միջոցները սպառողական կոոպերացիայի շրջանառության մեջ քաշելու համար հասարակական ուշադրությունը ակտիվացնելու գործում հրահանգիչները պետք է կանգնած լինեն տեղական ակտիվի գլուխը։

* * *

Սպառողական կոոպերացիան ներկա մոմենտում ապրում է ֆինանսական մեծ դժվարություններ։ Այդպիսի դեպքերում մշտապես բաղխվել են Պետբանկի դռները։ Այժմ փայատերն իր միջոցներով պետք է օգնություն ցույց տա թե խորհրդային կառավարությանը և թե կոոպերացիային։

Յուրաքանչյուր գիտակից փայատեր-բանվոր, բատրակ, չքավոր կամ միջակ անպայման կատարում է իր պարտքը հանդեպ իր խորհրդային սպառողական կոոպերացիայի, որը պաշտպանում է սպառողին շահագործումից և մասնավոր առևտրականի կեղեքումից։ Սպառողական կոոպերացիան ամեն տարի փայատերերին հարյուրավոր միլիոն ռուբլիների օգուտներ է տալիս այն գներով, որոնք տասնյակ և հարյուրավոր տոկոսներով ավելի ցածր են կոոպերացիայում, քան մասնավորի մոտ։ Փայատերը կպաշտպանի իր կոոպերացիան, եթե գիտենա նրա վիճակը, նրա կարիքներն ու պահանջները։ Յուրաքանչյուր կոոպերատորի գործը, յուրաքանչյուր կոոպակտիվի պարտքը պետք է



լինի օգնել փայատիրոջը՝ հասկանալու կոոպերացիայի գործերն ու կարիքները և Խորհրդային երկրի սոցշինարարության նրա խնդիրները։ Այդ հանգամանքը կապահովի ավանդների գործի և ընդհանրապես բնակչության միջոցների մոբիլիզացիայի աշխատանքի հաջողությունները։

---

Հավելված 8

## ԲՈԼՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ—ԿԵՆՏՐՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Կենտրմիության մեջ ստացվող նյութերից յերեվում է, որ շատ կազմակերպություններում ավանդների գաղտնիքը չեն պահում։ Ջքավորների և միջակների ավանդները հայտնի յեն ամբողջ գյուղին, և դրա հետևանքն այն է լինում, որ ավանդների աշխատանքի վարկն ընկնում է և մարդիկ մասսայորեն յետ են վերցնում իրենց մտցրած ավանդները։

Սրանով մենք առաջարկում ենք յեռանդուն միջոցներ ձեռք առնել վերացնելու այդ յերևույթը, վերականգնել և ամրացնել ավանդների գաղտնիքը։ Ավանդների գաղտնիքը խախտողներին պետք է կանչել որինական պատասխանատվության։

Ավանդների գործը ժողովրդականացնելու համար անհրաժեշտ է հատուկ կամպանիա անցկացնել և նոր ավանդներ կուտակել, կամպանիայի մեջ քաշելով կոոպակտիվին և ամբողջ կոոպհասարակայնությանը։

Մի շարք կազմակերպություններում (Վասիլյևի բանկոոպը, Թաթար. հանրապետությունը) ժամկետային ավանդներն ու նպատակային ավանդները հաջողությամբ գործադրվում են լայն գործածության առարկաների, որոնց թվում նաև նորմավորված առարկաների վրա։ Նպատակային ավանդների տալոնի գրքույկները (ապրանքների համար. Թույլ է տրվում



վերադարձնել նաև կանխիկ փողով) կազմված են բլ-նայողական գրքույկների ձևով և բովանդակում են մուտքի և յելքի համար չեկեր կամ օրդերներ։ Ամեն տեսակի ապրանքներ գնելիս գնորդը վճարում է յելքի չեկ, որն ազատում է դրամարկղի մոտ հերթի կանգնելուց։

Ավանդների այդ տեսակը ջերմ ընդունելության է արժանացել բանվորների և մանավանդ բանվորների կանանց կողմից, որով նրանք ապահովված են համարում իրենց հարբեցողությունից և կորուստներից։

Հանձնարարելով բոլոր կոոպկազմակերպություններին կիրառելու ավանդների այդ ձևը, դրա հետ միասին մենք առաջարկում ենք բրոնյայի յենթակա ապրանքների համար գործադրել նաև Կենտրմիության վարչության 1929 թ. 4/VI-ի (տես Բյուլ. № 28, 1929 թ.) որոշման մեջ ցույց տված նպատակային ավանդները, որոնք պետք է բաժանել ըստ յեռամսյակների, յելնելով ներմուծման կառուցվածքից։

Վարչության անդամ՝ Բուսուգով

Հրահանգիչ-խորհրդատու՝ Գոլցսեյն

## ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Փայագումարի սահմանափակումը, միջոցների մեծ կարիքի դեպքում, անհրաժեշտորեն պահանջում է մաքսիմալ չափով օգտագործել մյուս բոլոր հնարավորությունները և բնակչության միջոցների մոբիլիզացիայի աղբյուրները։ Փայերի և ավանդների հետ միասին այդպիսի հիմնական աղբյուր է հանդիսանում

ապրանքների համար նպատակային ավանսների գանձումը։ Ավանսների գանձման նախկին փորձը ամբողջովին ապացուցել է միջոցների մոբիլիզացիայի այդ մեթոդի կենսունակությունը, սակայն դա վիժեց գեպի նա ունեցած անուշադիր վերաբերմունքով, համապատասխան ապրանքային կոնտինգենտներ չհատկացնելով, որով ավանսային գործառնությունները ընդհանուր աչքում վարկաբեկվեցին և անհաջողության դատապարտվեցին։ Բացի դրանից ավանսների գանձման աշխատանքը կատարվում էր կաբինետային ձևով, առանց փայատերերի ակտիվին և մասսաներին գործի մեջ քաշելու։

1929—30 թվի III յեռամսյակին ձեր միության տրվում է ավանդների և ավանսների գանձման վերահսկիչ թիվ . . . . ռուբլի, որի թվում՝ գյուղում . . . ռուբլի, քաղաքում . . . . ռուբլի։

Այդ գումարն ընդունեցեք մինիմալ, տեղում ճշտման և զգալի կերպով գերակատարման ընթացքում, առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով.

1. Յեթե ձեր սեփական վերահսկիչ թվերը գերազանցում են Կենտրմիության թվերին, վերջնական են համարվում ձեր սեփական վերահսկիչ թվերը։ Վերջիններս պետք է շտապ կերպով հաղորդել Կենտրմիությանը՝ ԽՍՀՄ-ի ընդհանուր պլանի մեջ մտցնելու համար։

2. Ավանդների և ավանսների գանձումը փայակուտակմանը համահավասար պետք է հրապուրի միության ուշադրությունը և կատարվի հասարակական ներգործության նույն տեմպով և նույն մեթոդներով։

3. Պետք է ուշադրության առնել նպատակային ավանսները և քաղաքային սեկտորը, իսկ գյուղում այնները, որտեղ մասսայական կոլեկտիվացումը թույլ է ծավալված։

4. Ապրանքային կոնտինգենտներն ու նրանց քանակը որոշեցեք տեղում, ելնելով ապրանքների ներմուծման ձեր պլաններից և նրանց կառուցվածքից։ Յուրաքանչյուր յեռամսյակի սկզբին ապրանքների քանակը և կոնտինգենտները որոշելու համար՝ դործարանների և հիմնարկությունների փայատերերի ժողովների միջոցով գործի մեջ քաշեցեք փայատերերի լայն շրջաններ։

Բոնյալի յենթարկված ապրանքների բաշխման համար գործի մեջ քաշեք կոոպակտիվի վերահսկողությունը։ Հրավիրեցեք կոոպկազմակերպիչների և հավաքարարների հատուկ խորհրդակցություններ՝ աշխատանքի յեղանակները որոշելու և այդ աշխատանքում հավաքարարների ունեցած մասնակցությունը խթանելու համար։

Պայմանավորվեցեք մամուլի հետ այդ աշխատանքում մամուլի ունենալիք մասնակցության սխեմի և ձևերի վերաբերյալ։

Ավանդների և ավանսների գանձման հարցը դըրեք հրահանգչական խորհրդակցության քննությանը՝ հրահանգչական մասնակցության համար հաստատուն կարգ մշակելու, այդ աշխատանքը ղեկավարելու և վերահսկողության յենթարկելու համար տեղերում։

Հենց սկզբից հատուկ ուշադրություն դարձրեք միությանը ինֆորմացիա և հաշիվ տալու և առհասարակ այդ հարցի դիրեկտիվների կատարման վրա հսկողություն ունենալու և ստուգելու վերաբերյալ։

Հիշեցնում ենք սահմանված ձևերով և սահմանված ժամկետներում կենտրմիությանը կանոնավոր ինֆորմացիա և հաշիվ տալու անհրաժեշտության վերաբերյալ, վորոնց խախտումը առաջ կբերի վորոշ սանկցիաների կիրառում.

Վարչության անդամ՝ Քուսուզովա
Կազմբաժնի վարիչ՝ Թոքուասով

Гос. Публ. библиотека
ՀՍՍՀ — ССРА
[redacted]
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203287

ԳԻՆԸ 12 ԿՈՊ. ($1^5/_8$ մ.)

З. ГОЛЬДШТЕЙН

# ПОЧЕМУ КООПЕРАЦИЯ РАЗВИВАЕТ ОПЕРАЦИИ ПО ВКЛАДАМ

Госиздат ССР Армении
Эривань 1931